

«ԿԵԴՐԱԴԱՐՁ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

Posted on December 22, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 19 Դեկտեմբեր 2020

Վերջերս իսկապէս սրտցաւ բարեկամ մը հարցուցած էր թե՛ Լեւոն Տէր-Պետրոսեան պէ՞տք է վերադառնայ իշխանութեան: Հարցումը այնքան գայթակղեցուցիչ էր մանաւանդ որ ինդրոյ առարկայ անձը (ԼՏՊ) ինծի համար շատ յարգելի անձ մը ըլլալով, չկրցայ զսպել ինքզինքս եւ փորձութիւնը ունեցայ պատասխան մը տալ: Ահաւաստիկ այդ կարճ պատասխանս՝ որքան ալ ուզեն իր ոխերիմ հակառակորդները իրենց քաղաքական խորութեան բացակայութեան մակարդակին համեմատ ժխտական բաներ ըսել ինծի: Ես պատրաստ եմ զանոնք...արհամարհելու:

«Յարգելիներ, հայկական կամ քրտական առածը կ'ըսէ. «Մարդ պէտք է հայուն վերջին խելքը ունենայ...»: Ի՞նչ նուաստացուցիչ խօսք մեր հասցէին եւ սակայն որքա՛ն դիպուկ: Այո՛, ատենին երբ Լ.Տ.Պ. յայտարարեց թէ զգաստութեան պահն է, սուկններով դիմաւորեցինք՝ տեսակ-տեսակ վերագրումներ կատարելով: Քիչեր միայն լրջութեամբ եւ հեռատեսօրէն ընդունեցին այս խօսքերուն իմաստը: Չիս «հանդիմանել» փորձեցին ոմանք՝ պարտուողական կոչելով զիս...: Ատեն մը մեկուսացայ այդ պատճառով:

Ի՞նչ կ'ուզեն թող ըսեն զանազան հաշիւներ ունեցողներն ու տարօրինակ բարդոյթներէ տառապողները, Լ.Տ.-Պետրոսեանը մարգարեացած էր, որովհետեւ պատմութիւնը լաւ գիտեր եւ մեր ժողովուրդը խորքէն կը ճանչնար իր թերութիւններով ու յատկանիշներով:

Լ.Տ.-Պետրոսեան երկու տարի առաջ ալ նոյն բաները խօսեցաւ եւ կրկին անգամ պայթեցան ՀՅԴ եւ շրջանակի, նախապաշարեալներու, **հայրենադարձի գաւակ** Լ.Տ.Պ.ի դէմ ի ծնէ հակակրանք ունեցողներու ռումբերը: Բայց ան իմաստուն կերպով լռեց ու ակելի մռայլ դարձաւ, որուն համար ազգիս *վա՛յ մտաւորականներէն* շատեր վայնասուն բարձրացուցին՝ դարձեալ տեսակ-տեսակ անուանարկիչ խօսքեր ըսելով, խօսքեր, որոնք իրենց կը յարմարէին իմ դատողութեամբ: Դէ՛հ, այսուհետեւ գացէք եւ տեղերնիդ նստեցէք ու ձեր գլխուն մոխիր թափեցէք՝ մինչեւ որ օր մը մեր «փրկիչ-մեսիան» իջնէ երկինքէն:

keghart.org-ը իր վերջին համարներուն մէջ այս մասին անդրադարձաւ եւ հրատարակեց Յարութեան Տէր-Դաւիթեանի նման լրջախոհ մտաւորականին ու յառաջադէմ լրագրողին յօդուածները: Գտէք եւ կարդացէք, որպէսզի իմանաք թէ ես առանձին չեմ եւ ինձմէ ակելի կարեւոր մարդիկ նոյնպէս ինծի պէս կը մտածէին եւ կը մտածեն:

There are no comments yet.